ԳՑԱԲՐԻԵԼԱՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏՈՒԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՔՆԵՐ

№ 30 կիրակի 9 օգոստոսի | երրորդ տարի | 1892

Նոքիւրի տարեկան բաժանորդագրութիւն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 րուբլի. առանձին №-ը 25 կ. Հասցէն. Тифлисъ. Редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ, իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

Սպառած են Նոքիայ թիւերի «ՊՂԻՒԻՒ» №№ 1, 2. «ՏԱՐԱԶԻ» №№ 3, 5, 8, 9.

ՅԷՐ ՍԱՄՓՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Ամսոյս 1-ին իրիկնադէմին, կօջօր աւանում, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ թեմիս արքազան առաջնորդ **Սամբռէ եպիսկոպոս Սանասարեանը** *եւ ամսոյս 6-ին հանգուցեալի մարմինն ամիրտեցին Վանից Մայր-եկեղեցու բակում Մկրտիչ Սանասարեանի գերեզմանին կից:*

Հանգուցեալը ծնել է Վաղարշապատում 1843 թին եւ աւարտելով իր ուսման ընթացքը ս. Էջմիածնայ Ժառանգաւորաց դպրոցում, ձեռնադրւում է սարկաւագ. 1864 թ. ձեռնադրւում է աբեղայ եւ ծառայում Մատթէոս կաթողիկոսի մօտ՝ իբրեւ կօնդակագիր: Ապա ուղարկւում է հանգուցեալը ս. Խաչ վանքի վանահայր, իսկ Գօրի, Նախիջեւան, իբրեւ յաջորդ. Թիֆլիսում, հանգուցեալ Գաբրիել Այտազեան արք-եպիսկոպոսի օրերով, նախանդամ Կոնսիստորիայի եւ վանահայր ս. Սարգիս վանքի, ուր նա նորոգում է վանահօր եւ ուխտաւորների համար կառուցած շէնքը: Սրբազան արք-եպիսկոպոսի մահից յետոյ հանգուցեալը կառավարում է Վրաստանի թեմը: Ապա նշանակւում է Ախալցխա յաջորդ եւ Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ անդամ Սինոդի. 1888 թին Մակար կաթողիկոսը ձեռնադրում է հանգուցեալին եպիսկոպոս ու սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին էլ կանչելով ս. Էջմիածին աւելի մեծ պաշտօն յանձնելու, հանգուցեալ սրբազան Մամբրէ եպիսկոպոսին նշանակում է Վրաստանի եւ Իմէրէթի լայնածաւալ, առաջնակարգ թեմին առաջնորդ:

Ամբողջ առաջնորդութեան ժամանակ Մամբրէ եպիսկոպոսը հիւանդ էր եւ ծանր հիւանդութիւնը շատ էր ծանրաշում հանգուցեալին, որ միշտ ցաւ էր յայտնում, որ հոգին չօժար է գործեղուն, որի համար ասպարէզը մեծ է, իսկ մարմինը տկար:

ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ

Սրբազան արք-եպիսկոպոսի մահից յետոյ հանգուցեալը կառավարում է Վրաստանի թեմը: Ապա նշանակւում է Ախալցխա յաջորդ եւ Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ անդամ Սինոդի. 1888 թին Մակար կաթողիկոսը ձեռնադրում է հանգուցեալին եպիսկոպոս ու սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին էլ կանչելով ս. Էջմիածին աւելի մեծ պաշտօն յանձնելու, հանգուցեալ սրբազան Մամբրէ եպիսկոպոսին նշանակում է Վրաստանի եւ Իմէրէթի լայնածաւալ, առաջնակարգ թեմին առաջնորդ:

Ամբողջ առաջնորդութեան ժամանակ Մամբրէ եպիսկոպոսը հիւանդ էր եւ ծանր հիւանդութիւնը շատ էր ծանրաշում հանգուցեալին, որ միշտ ցաւ էր յայտնում, որ հոգին չօժար է գործեղուն, որի համար ասպարէզը մեծ է, իսկ մարմինը տկար:

ՐՕԼԱՆԴ *)

(ՕՍՏՐԱԳՕՐՍԿՈՒՅ)

Ուաք գոբձեց իր գօրքով կայսրը Սարակոսը. վայելեցին աշտարակներն վրայ Ֆրանսիացոց դրօշակները, իսկ մէչէդներն վրայ — խաչերը։ Վերջացաւ դաժան պատերազմը, խոնարհեցան Կարլոսի գօրութեան ներքոյ անհաւատներըն։ Շնորհեց կայսրը բոլոր կալատաւորներին և՛ պատուէթիւն և՛ ներումն։ Հրամայեց իր բոլոր մոնեթիկներին, որ յայտնեն Սարակոսի բոլոր տեղերում բնակիչներին, որ հաւաքուեն բոլորեքեանք՝ մեծից մինչև փոքրը, ասպետից սկսած մինչև վերջին ծառան Սրբոց դեմ ասելը։ Մօտեցան գեղին սպիտակ հագուստներով, մոմերով, խաչերով և խաչվառներով քահանաները, արքեպիսկոպոսները, մօտեցաւ և ինքը կայսրը չորս ասպետներով։ Լսեցան գեղի վրայ ազօթքներ, բարձրացաւ դէպի երկինք բուրվառի ծուխը, խաչակնքեցին սուրբ հայրերը գեղի ջուրը և յետ նրանց վրայ Աստուծու ողորմութիւնը և բարմութեամբ սկսեցին մտնել ջրի մէջ անհաւատները։

Եւ ուրախ էր և պարէ կայսրը, և ուրախ էր նրա հետ իր ամբողջ զօրքը։

Վերադարձաւ վերջապէս ծանր դժուարութիւնները յաղթելուց յետոյ մեծ կայսրը Ֆրանսիա, հանդիսաւոր մուտք գործեց իր մայրաքաղաքը և մտաւ իր սիրելի պալատը։ Ուրախ ուրախ լսրեւում էին չորջը ասպետները, պաճուճանները, անուշիկ, հպատակները և նրանց սիրուց զգացած՝ ուրախ էր կայսրը։ Բայց ահա՝ երբ դոյնզդոյն ամբոխը սկսել էր նշուպել՝ հանդարտ քայլերով մօտեցաւ Կարլոսին Օլիվիէի քոյր՝ գեղեցիկ Օտան, և հարցրեց,— իսկ ո՞ւր է, Թագաւոր, քո հաւատարիմ ասպետ Րօլանդը։ Նա իմ նշանածն է, նա նշանած է ինձ հետ...

Յիշեց կայսրը։ Երկար ժամանակ նա չը կարողացաւ խօսք արտասանել և վերջապէս ասաց դողդողուն ձայնով.

— Մանկիկ, լաչուում եմ ես քեզ... Թուլ ոչինչ չը պիտես... Րօլանդը չկայ... Նա մեռաւ... Ես կը տամ քեզ Նրա վոխարէն ուրիշ Նշանած... Ես կըտամ իմ հարազատ որդուն, իմ առաջնակին։ Չգուսմ եմ երկար չեմ ապրելու։ Սրբ պերեդման կինդնեմ՝ կընտանեանմ իմ գահն վրայ, կը դնի իմ արքայական Թագը... Թուլ կը լինես Ֆրանսիայի Թագուհի։

Թուխանձաւեց գեղեցկուհին։

— Չի հարկաւոր լինձ, չի հարկաւոր, բացականչեց Նա։ Սրբ ցանկացաւ Աստուած, որ չը լինի Րօլանդը՝ էլ լինչու համար եմ ես նրա հաւատարիմ հարսը մնալու երկրի երեսին։

Այսպէս խօսում էր Նա և թուլանում էր Նրա սրծանձրանչելն ձայնը։ Միմիայն Նա վերջի խօսքերը, խոնարհեց Թագաւորի առաջ գլուխը, որպէս արմատախիլ արած մատաղ ծառ՝ ընկաւ մեռած կայսրի ոտների առաջ։

Կանչել տուց կայսրն իր յայնատարած պետութեան ամեն կողմից ասպետներին՝ դաւաճան Գանելիոնին դատելու համար։ Ընտրեցան երեսուն դատաւորներ, և յայտնուեց Նրանց առաջ Գանելիոնը։ Նա կապանաւորուած էր, պատատած հագուստով, կիսամերկ, ցեխոտ, ծեծուած և ամբողջապէս արիւնոտ վէրքերով ծածկուած, բայց Նրա երեսը էլի հոյնպէս գոռոզ էր՝ որպէս և առաջ։ Բարձր պահած ունէը գլուխը և դէմքով յետ չէր մնալ ոչ մի ասպետից։ Զրվրդովուեց Նա իր վրայ բարձած մեղադրանքը լսելուց, և յանդուգն խօսքերով սուլլ գըրգռեց իր դէմ դատաւորներին։ Իսկ վերջիններս միահայն վճռեցին, որ Գանելիոնն արժանի է մահուան պատժի։

Բայց դանեցաւ Գանելիոնի համար մի հզօր պաշտպան, որը և Նրա հետ միասին յայտնուեց դատաւորների առաջ։ Դա Նրա վաղեմի ընկերը, Նրա դրացի Պանաթէլն էր։ Հարուստ, ազնիւ, քաջ և բարեխիղճ մարդ էր Նա և համարուում էր Ֆրանսիայոց մէջ առաջին ուժեղը։ Փայլող աչերով՝ Նա առաջ անցաւ և բացականչեց.— եթէ դուք ամենքդ խօսք էք կապել դատապարտել իմ ընկերոջը,—այն ժամանակ Նա կմրդապատճառնի իմ սրով։

Վրդովուեցան դատաւորները և սկսեցին քչփչալ։ Ոչ ոք չէր ցանկանում կռիւ մտնել այդպիսի ասպետի հետ։ Դատաւորներն ամենքը Ֆրանսիացիք չէին, այլ կային և Նրանց մէջ ընկճած սակսնացիք և գերմանացիք։ Վրդովուեցին Նրանք բոլորից շատ և վճռեցին գնալ Կարլոսի մօտ՝ Գանելիոնի համար ներումն խնդրելու։—Նա ուղիղ է, ասում էին Նրանք. Թագաւորի եղբօր որդին վիրաւորել է իր Տոլճի հօրը. Րօլանդին այլ ևս չի լինել բարձրացնել գերեզմանից, եթէ դատենք Գանելիոնին, կըզգուխենք մի քաջ ասպետից էլ, և կըգանենք մի վէշժինգիր՝ Պանաբէլի մէջ։ Այսպէս վճռեցին բոլոր քսան և ինը դատաւորները, մինչդ Նրանցից մէկը՝ երիտասարդ ասպետ Տիլերին՝ Գոտիրիկ Անժուսկու եղբայրը՝ չէր ցանկանում լսել Ներման մասին, և չզգնաց Նրանց հետ կայսրի մօտ

Ակամբ գրեց կայսրը դատաւորների վճիռը, եւաց դժգոհութիւնից։

— Ծուք ամենքդ՝ ինչպէս տեսնում եմ՝ դաւաճաններ էք, բացականչեց Նա։ Ծանր և վիրաւորիչ էր կայսրի համար, որ չըկայ այլ ևս ասպետների մէջ սուրբ Ճըշմարտութիւն։

Այն ժամանակ Ձեղքեց ամբոխը և առաջ անցաւ և յայտնուեց կայսրի առաջ մի երիտասարդ ասպետ՝ զրահներով բոլորովին ծածկուած։

— Մի վհատիր, բարի Թագաւոր։ Ես Ճշմարտասէր հպատակները բոլորը չեն ընկել Րօնսիվալիայի հովտում։ Դեռ կըգտնեն ազնիւ ծառաներ՝ քո պատուի և Ճշմարտութեան ալոյեան կանգնելու համար։ Ես, իմոս Տիլերի Արգոնսկին, Գոտիրիկ Անժուսկու եղբայրը, բարձրաձայն յայտնում եմ այստեղ՝ ընդհանուր ժողովի առաջ, որ Գանելիոնը մատնիչ և դաւաճան է, և դրա պատճառաւ սիրած մեռնի խայտառակ մահով։ Եթէ Նրա բարեկամներից մէկը կամենայ պատասխանել, թէ ես է զուր տեղից եմ Նրա վրայ բարձել այդ բամբասանքը՝ այն ժա-

*) Տես „Տարազ“ № 29.

մանակ ես պատրաստ եմ հաստատելու իմ ասածներն Աշոտ-Թիւնը սրով։

—Ես ասում եմ, որ դու ստում ես, բացականչեց Պանարէլը, ես պատրաստ եմ ապացուցանել իմ խօսքերն անհարդալի մենամարտութեան մէջ...

Եւ Պանարէլը հանեց ձեռնոցը և նրանով զգուշով սուց Նրան Թագաւորին և ասաց.

—Ձմարիտ, կայսր... ես, Պանարէլը և Ալբօնակը Տիւերըի կոմսը կանչում ենք մէկ մէկու մենամարտութեան։ Թոյլ տուր մեզ կանգնել Աստուծու դատաստանի առաջ։ Թող Աստուած ինքը վճռի մեր հին սովորութեան համեմատ՝ նա է մեզանից արդար։ Եթէ ընկնի կոմս Տիւերընի՝ այն ժամանակ Դանելիոնը պիտ արդարացած համարուի ժողովի առաջ, որովհետև արդար է յայտնուում անհաւատելի բարձր Դատաւորի ձեռքով, իսկ եթէ մենամարտութեան մէջ ընկնեմ ես՝ այն ժամանակ Թող դատապարտուի խայտառակ մահով Դանելիոնը՝ դատապարտած հրէնային Դատաւորի ձեռքով։

—Թող լինի այդպէս, վճռեց Թագաւորը և, առնելով Տիւերըի ձեռնոցը՝ հրամայեց երկու ասպետներին պատրաստել կռիւն։

Ամբողջ երեք օր, ինչպէս առ հաստատակ ընդունած էր անել Աստուծու դատաստանից առաջ՝ պատի և ոտքերի մէջ պատրաստում էին հակառակորդները։ Կատարեցին Նրանց համար առանձին պատարագ.—Աստուծու դատաստանի պատարագը։ Խոստովանեցին Նրանք իրանց բոլոր մեղքերը, ընդունեցին սուրբ մասունքը, վերջին անգամը տեսնուեցան իրանց բոլոր ազգականների, ընկերների, ծառաների հետ և նվիրեցին վանքերին ու հիւղեցիներին Թանկագին ընծաներ։

Թագաւորական մայրաքաղաքի չափը, լայն, ընդարձակ դաշտի վրայ, անթիւ բազմութեան, զօրքի, պալատականների և իրանց Թագաւորի Ներկայութեամբ՝ դուրս եկան հակառակորդները սարսափելի կռւի։ Նրանք հագել էին իրանց ամենալաւ զրահները, զարդարուել ոսկով, արծաթով, նաեւ իրանց պատերազմական ձիերի վրայ։ Ձեռքով նշան տուեց կայսրը, մանեակը բարձր ձայնով յայտնեց դատաւորների անունները, վոզհարեց նեցմսկի գուքսը։

Յարձակուեցան մէմեանց վրայ ասպետները. ուժեղ, ահռելի հարուածից փշրուեցան նրանց վահանները, ընկան զրահապատ պահները, կոտրուեցան ձիերու Թամբակալները, չուռ եկան Թամքերը և ընկան գետնին երկու ասպետներն էլ։

Զրկուած Թագուհուց քաջ ասպետները, երկուսն էլ վեր ցատկեցին մէանգամից և յարձակուեցան մէմեանց վրայ սրերով... Քաջ և հմուտ է Պանարէլը. հմուտ և քաջ է և՛ Տիւերըը. վաղուց էր, որ շարունակուում էր կռիւը, բայց դեռ ոչ մի կողմը չէ կոնարհուում։

—Կանգնիր, Տիւերը, ազաղակում է Պանարէլը։ Հաշուենք... ընկիր կրկտանամ, կրբաժանեմ քեզ հետ իմ բոլոր ունեցածը... բոլորը կրտամ... միայն խոստացիր՝ կապրեց Դանելիոնի համար ներումն ձեռք բերելու...

—Չըկայ Թագուհին դատաւորներին, ազաղակում է Տիւերըը։ Չես կարող հաշուել ինձ։ Բոլորի առաջ, որովհետև ասպետութիւնը, որ Աշմարիա գործ ես պաշտպանում։ Տէրը կըզատէ մեզ։

Կռւում են Տիւերըը և Պանարէլը։ Բոլոնքը հոսում է գետակներով Նրանց Հակառակներից, արեւի կիզիչ Հառագայթների տակ տաքացած զրահները այրում է Նրանց, բայց այսուամենայնիւ ոչ մէկը չէ կարողանում յաղթել մեւսին։

—Կանգնիր, Պանարէլ, ազաղակում է Տիւերըը։ Դու քաջ ես և Աշմարիա, պատրաստ եմ հաշուել, բայց դու պաշտպանում ես անարդար գործ, լսիր ինձ, Դանելիոնը դատաւճռի է և պիտի մեռնի։

—Երբէք, ազաղակում է Պանարէլը, չեմ մատնիլ Դանելիոնին։ Քաջասիրտ Տիւերը, մտածիր ինքդ, կարո՞ղ եմ արդեօք ես առանց պաշտպանի Թողնել իմ վարձիր ընկերոջ, ազգականիս։ ՄանկուԹիւնից սիրած մեծ անբաժան ենք եղել, բաժանել ենք մեր օրական հացը, աշխատանքը։ Կարո՞ղ եմ արդեօք այժմ ատելուԹիւնով շրջել երեսս Նրանից, Նա մենակ է այժմ ամբողջ աշխարհում, բոլորն անիծում են Նրան, բոլորը, մինչև անգամ իր տղաքականները. Նրա կինը՝ Բօլանդի մայրը՝ չէ կարողանում զսպել իր կատաղուԹիւնն ամուսնու անունը լսելիս... Լսկ Նրա որդին դեռ փոքր է, Նա չի կարող իր մանկական ձեռքերով հօր համար ծանր սուրը բարձրացընել։ Ո՛վ պիտի պաշտպանէ Նրան.—մենակ ես եմ Նրա Նեցուկն ամբողջ աշխարհում։ Մենակ ես եմ բոլոր սրտով աղօԹում Տէր Աստծուն Նրա համար. Թող Նա լսէ մանպաշտպանի վրայ՝ ուղիղ Հանապարհ հանէ մոլորեալ ոչխարին, իսկ ինձ յաղԹուԹիւն պարգևէ քո վրայ։

Եւ Նորից սկսեց կռիւը, երկար ժամանակ ոչ ոք չէը յաղԹահարում, բայց ահա Պանարէլը պարիեց հակառակորդի սաղավարտին։ Որպէս անձրև՝ դեանին Թափուեցան կայծերն այդ հարուածից և այրեցին խոտը։ Ծխմ կացաւ ամուր սաղավարտն այդ հարուածին, բայց պէտ չըկացաւ Նրա երեսի վողջանակը և երկու մասի բաժանուեց։ Անցաւ Տիւերըի երեսով հակառակորդի սուրը և վիրաւորեց Նրա ատամը. Թափուեց արիւն և Նեղուեց խոտը։ Ցնցուեցին փրանսիացիք, գնմեցին Աստծուն, որ Նա Թոյլ չտայ անարդար գործին յաղԹող հանդիսանալու։

Ինչպէս նետով վիրաւորուած արծիւ՝ կատաղեց Տիւերըը, զգաց իր մէջ մեծ ոյժ և յարձակուեց Թշնամու վրայ։ Սկսեց յետ քաշուել նեզացած Պանարէլը՝ շարունակելով սրով յետ տալ հակառակորդի հարուածները, բայց Տիւերըը հասցրեց Նրան մի այնպիսի հարուած, որ միանգամից փշրեց Նրա և՛ սուրը, և՛ սաղավարտը, և՛ գանգը։

Ամբողջ բազմութեան վրայով՝ զարհուրելի մի ծանրից մինչև միւսը՝ անցաւ լուռ շշունջ... Եւ լուեց դաշտը ապշահով. կայսրն արդար է... Աստուծու դատաստանը կատարուեց պատժել դաւաճան Դանելիոնին...

Եւ պատժեցին դաւաճանին դաժան, դանդաղ մահով։

Մատաւ սրևը... Մութը պատեց երկիրը։ Նեղացած օրուայ ծանր աշխատանքներից՝ առանձին, հանգիստ նընջասրանում պատրաստում էր քնելու կայսրը։ Բայց լուռ գիշերւայ մէջ՝ անլսելի քայլերով՝ մօտեցաւ Նրա անկողնուն Աստուծու պատգամաւորը՝ Գաբրիէլ հրեշտակապետը, խոնարհուեց ծերունու անկողնու վրայ և ասաց.

—Զարթիր մեծդ Կարլոս... հանգստութիւնը քեզ համար չէ... բարձրացիր... կանչիր Նորից քո զօրքերը՝

քո ընդարձակ պետութեան ամեն ծայրերից։ Նարժիը գնդերդ պէտք արևելք, ազատիր անկումից քրիստոնեաներին։ Այնտեղ, Սիրեայում՝ անհատատներով պաշարուած՝ չարչարուում են նրանք սովից և ծարաւից, սպասում են աւելի մեծ չարչարանաց գաժան մահից։ Միայն քեզնից են սպասում օգնութիւն... Զարթիր...

Զարթեց կայսրը։ Նրա կողմը տիրում էր խորին լռութիւն... մութ է անկողնու չորս կողմը... արտասուեց Յեբը, խաչակնքեց երեսը և մրմնջաց.

—Իմ ամբողջ կեանքն է ծանր չարչարանք Քրիստոսի համար...

Թարգ. Լ. ՄԵԼԻՔ-ԴԱՎԹԱՅԵԱՆՑ

Վ Ե Ր Ջ

ՄԱՀԻԱՆ ԳԻՇԵՐ

Ընկաւ աստղերն երկնքից,
Տերեւները թափուեցին,
Պարապատիար լաց ու ծիւ
Ողջ կենդանիքն հանեցին։

Ասես քամին բան գուժեց
Պուտ խորքերն անտառի,
Զարթնեց անտառն, երգ երգեց—
Պարնից երգը ցաւալի։

Իսկ մայր-հողը դողդողաց,
Ձգեց անիծ որոտներ,
Լուեց ամենը յանկարծ—
Հատաւ ժամը մահուարներ...

Ց. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ԼԻ ՕԳՆԵԼ ԹՇՆԱՒՈՆՆԵՐԻՆ

Մեր ընթերցողներն արդէն գիտեն, որ Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընդհանուր Ժողովը Խորհրդի առաջարկութեան համաձայն՝ վճռեց 5,000 րուբլի գործադրել խօլերայից հետեւանքներին օգնելու եւ աջակցելու այն հայ հասարակութիւններին, ուր համաճարակը սրփռել է իր ճիրանները։ Ընկերութեան Ընդհ. Ժողովը յարգելի Խորհրդին էր թողել որոշելու այդ գումարի գործադրութիւնը։ Որքան մենք իմացանք, Խորհուրդը կամենում է եղել այդ 5,000 րուբլուց մի հազարը Թիֆլիսում գործադրել թէյատուն, ճաշարան կամ անվիտարական մի առանձին յանձնաժողով կազմելու, իսկ մնացեալ 4,000 ր. գաւառներում։ Սակայն հանգամանքները, մանաւանդ մամուլի պահանջը,—որ Թիֆլիսում ոչ մի կռահկ չըմնահեն այդ գումարից, այլ ըոլորը գործադրուին գաւառներում,—ստիպեցին յարգելի Խորհրդին ամբողջ այդ 5,000 ր. Ընկեր. ճիւղերի միջոցով ուղարկել գաւառները։ Այժմ, բաւնից դուրս է գալիս, որ այդ գումարը շատ քիչ է եւ Ընկեր. անդամներից մի տասը հոգի գրաւոր խնդրում են Խորհրդին, որ կրկին մի Ընդհանուր ժողով կազմեն եւ դարձեալ մի 5,000 ր. էլ գործադրեն համաճարակի դէմ մաքառելու։

Սկզբունքով մենք բոլորովին համաձայն ենք պատկառելի Ընկերութեան այն անդամների հետ, որոնք այդ աղէտի առաջն առնելու համար կրկին խնդրում են Հայոց Բարեգործական Ընկերութեան աջակցութիւնը եւ նրա ընծայաբերածը շատ քիչ են համարում։ Մեր ընթերցողները քաջ գիտեն, որ այդ աղէտի առիթով մենք մի շարք առաջարկութիւններ եւ պահանջներ արինք, մանաւանդ Բագրի Մարդասիրական Ընկերութեան ուղղակի առաջարկելով, որ ամբողջ ղրամագլուխը գործադրի Բագրից իրանց հայրենիքը հիւանդ վերադարձած մշակների եւ նրանց ընտանիքների համար, այն էլ այն պայմանով, որ քազեցի ղրամատէրերն իրանց հղեղէն քաղաքը վերադառնալուց յետոյ, անյապաղ Մարդասիրական Ընկերութեան յետ տան այդ գումարը լիովին։ Այս մասին մենք դեռ շատ ասելիք եւ պահանջ ունինք քազեցիներից, բայց այդ իր ժամանակին...

Թիֆլիսի Բարեգործական Ընկեր. վերաբերմամբ մենք անպատեհ ենք համարում նոյնն ասելու եւ առաջարկելու, որ նա իր ամբողջ ղրամագլուխը, կամ՝ նրա մի շօշափելի մասը գործադրէ այս աղէտի ժամանակ։ Ահա ինչու։

Ներկայ համաճարակի առաջքն առնելու եւ այդ աղէտից վնասուածներին օգնելու համար Բարեգործական Ընկերութեան ամբողջ ղրամագլուխն անգամ՝ (30,000 ր.) համեմատելով ներկայ պահանջի հետ, բոլորովին **աննշան** մի գումար է, եւ նա չի կարող ղրանով նոյն իսկ **ամենաթեթև օգնութիւն** հասցնել հայաբնակ բոլոր այն գաւառներին, ուր տարածուած է համաճարակը։ Իսկ օգնել մի գաւառի

Քանդակագործութիւն հին Անեցւոց ձեռագիր կազմի վրայ — Ս. Էջմիածնում:

*եւ աչքի թողնել միւսը՝ այդ եւս նա չի կարող անել: Մնում՝ էր, միր կարծիքով, որ Ընկերութիւնն իր լուման ճգէ ընդհանուր գանձանակի մէջ եւ յետ կանգնէ ասպարիզից, եւ կամ՝ թէ միանայ մի այլ հզօրի հետ եւ երկուքը միասին՝ միացած ուժով՝ օգնեն հիւանդին, միխիթարեն ազատորին: Եւ ահա հէնց այդ պատճառաւ մենք „Տարազի“ անցեալ №-ում՝ առաջարկել էինք, որ Բարեգործական Ընկերութիւնը ս. Էջմիածնի հետ ձեռք-ձեռքի տւած գործէ: Եւ յիրաւի, երեւակայեցէք, ի՞նչ հսկայական գործ կարող է կատարել ս. Էջմիածինն ընկերակցութեամբ Բարեգործական Ընկերութեան: Վերջինս, կենտրոնից հրահանգներ կըտայ գաւառները, թէ ի՛նչպէս գործել, անընդհատ յարակցութիւն ունենալով իր ճիւղերի հետ՝ լիուլի տեղեկութիւն կըստանայ հանձնարարակի ընթացքի մասին եւ ըստ այմ՝ իր տնօրէնութիւնները շարունակ կանէ: Թիֆլիսից կուղարկէ ըժիշկներ, դեղօրայք, վարակաջինջ միջոցներ եւ պարագաներ: Իսկ ս. Էջմիածինը շարունակ եկեղեցիներում՝ յորդոր կարդալով, գանձանակ պտտացնելով, **եկեղեցական գումարները** ծախսելով, վանքերը, գիւղական դպրոցները հիւանդանոցների յարմարեցնելով, իր ատորադրեալ քահանաներին, վարդապետներին հիւանդների մօտ ուղարկելով, խրատախոսել պատուիրելով, վանքերի մասունքները քանալով եւ հրապիրելով, որ մասուներ լինին այդ հիւանդանոցներում՝ այն ժամանակ տեսէք, թէ ի՞նչ հրաշքներ կարելի է անել:*

Ի՞նչ քան է մի խեղճուկ 5,000 ր., 10,000 ր., նոյն իսկ 100,000 րուբլին այն մեծ արտօնութիւնների եւ յարմարութիւններին վերաբերմամբ, որ ունի ս. Էջմիածինը: Մենք համոզուած ենք, որ այսպիսի մի կազմակերպութեան ժամանակ մեր եւրիտասարդներից, ուսանողներից հարիւրներով կառաջարկեն իրանց պատրաստակամութիւնը եւ միխիթարած կըլինին իրանց թշուառ հայրենիքին եւ նրա անմիխիթար զաւակներին: Մենք գիտենք հէնց միայն Թիֆլիսում՝ տասնեակ հայ փափկասուն օրիորդներ, որոնք պատրաստ են այսպիսի մի կազմակերպութեան ժամանակ մեր հայաբնակ գիւղերում՝ կատարել զբաղութեան քոյրերի պաշտօն:

Կրկնում՝ ենք եւ ապատում՝, որ ս. Էջմիածինը իր հովանին կը տարածէ անօգնական հօտի վրայ, իսկ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ամենայն կերպ նրան աջակցէ:

—

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Մինչև այսօր դեռ չըլուծուած և օրինաւոր վճռողական բաւարարութիւն չըստացած հարցերից մինն էլ քահանայական հարցն է: Ցաւալի է, որ մեր քահանաներէն մեծամասնութիւնը կազմած է անկիրթ, ոչ մի հասարակական և ազգային հարցերով չըհետաքրքրուող, ժողովրդի մէջ փտած գաղափարներ ու ձգտումներ ներշնչող անձնաւորութիւններից: Արդ, ի հարկէ, նոր հարց չենք զարթեցնում և մինչև անգամ ձանձրալի է այն անձանց համար, որոնք գիտեն ու գիտեն այդ ցաւերը: Բայց յունիս ամսւայ „Արարատի“ մէջ հրատարակած քահանաների մասին մի քանի բարեփոխած կարգադրութիւնները թեւա

դրեցին մեզ մի քանի խօսք ասել այդ խնդրի վերաբերմամբ։

Մեզ քանիցս պատահել է լսել անբուսականութիւններ և ժգոհութիւններ հասարակութիւնից և հաստատող պատասխանից։

Մինչև այսօր մենք չկարողացանք պատասխանել տգէտ, ինքնակոչ քահանաներից։ Ինչ է սրա պատճառը, և արդեօք մեր սրբազան Սինոդի վերջերս արած կարգադրութիւնները վերջ կդնան մեր անկիրթ քահանաների հոսանքին—ահա այդ ենք ուզում մեր ներկայ յօդուածով պարզել և ըստ այնմ մեր կարծիքը յայտնել։

Մինչև այժմ մեր քահանաները ձեռնադրւում են այնպիսի ձևականութեամբ. կարճ ասենք. ձեռնադրւողի թեքերը չջջում է այն ծալքի մէջ, որին պիտի ինքը հովէր։ Քահանան ստանալով իրաւունք չջջել իր ծալքն անելը այդպիսի դէպքում, գործ է դնում ամենաընդունակ ձայնակութիւն։ Նա սկսում է չջջել իր ծալից այնպիսի անիւ, որնք ոչինչ հասկացողութիւն չունին այդ խնդրի վերաբերմամբ։ Ինչ հոչակաւոր, ինչ եղած խանութպան ասես դնում է իր ձեռքը։ Նաև անգամ մի տանից տասրագրում են եղբայրները։ Հաւաքելով այդպիսով 50 տասրագրութիւն, քահանայն գալիս է մի երկու վոքր ի շատ է հասկացողի մօտ և խընդրում է տասրագրել և այդպիսի նախարարութիւններով թէ՝ ահա 40—50 մարդ տասրագրել է և խնդրում եմ, որ դուք էլ տասրագրէք, որ գործը վերջացած համարեմ... Ինչպէս—հարցնում էք դուք զարմացած,—այսքեղ միայն 50 տասրագրութիւն է... Այո,—պատասխանում է ձէզ,—Սրբազանն ասաց, որ աւել հարկաւոր չէ... Վհ՜հ, հասիեցէք, մի տասրագրէք —ձեր մի տասրագրութեան են նայեցէք։ Պատահում է՝ հայր-քահանան մտն է գալիս իր օրհոս համար և այդ էս քիչ նշանակութիւն չի ունենում, որովհետև քահանայից ճնշւում են և վերջապէս տասրագրում...

Նէ այդ պատահել է տեսնել այնպիսի քաղաքում, ուր հասարակութիւնը բազմացած է 1,200 անից և քահանան ձեռնադրւում է 50 հոգու տասրագրութեամբ. բանը նրանումն է, որ 1,200 տունը բաժանած է ծխերի և լուրաքանչիւր քահանայի վրայ ընկնում է 100—110 տուն և 60 տասրագրութիւնն (իրրեւ ծխի կիսից տալին) օրինական և բաւական է համարւում։ Իսկ մնացած 1,000 տունը կարծես մասը չըպէտք է ունենայ ընտրութեան մէջ. կարծես այդ քահանան ամրողջ հասարակութեան չի պատկանում, ընդհակ տեղը սա կարծես կրօնասոյց չի նշանակւում ամրողջ հասարակութեան մանուկ սերընդի վրայ։

Այդ մէկ։

Եւ զարմանալու բան ասած չենք լինել, եթէ ասենք, որ այդ խնդրումն էլ մեղը մեծ դեր է խաղում։ Մէկ էլ տեսաք մի տգէտ, անշնորհք ծիրացու իր հարուստ պրոտեժէի միջոցով քահանայ ձեռնադրեց։ Ինչ է՝ մեր այդ գործում գլուխ կանգնածները չեն ուզում հաստատգրուխ լա և հաստատգրական պահանջի խոթերին կպչել։

Այդ էս մի ցաւ։

Այդպէս մենք տեսանք այն միջոցները և խոթերը, որոնք չունենալով իրանց առաջ խոչընդոտ, ինչ դեր են կատարում։ Այսուհետ, որքան էլ հասարակութիւնն ունենայ հասկացող մարդիկ, ոչինչ չի կարող անել, քանի որ ընտրութեան ձևն էլ է անգոհացուցիչ և խոթատպաշտանելի թիւն էլ է շատ...

Ի հարկէ, մենք հաւատում էինք, որ վաղ թէ ուշ այդ անշնորհքները կըստիպեն հեռանալ ասպարէզից և սպասում էինք։ Այժմ կարդալով «Արարատի» մէջ յունիսի 17-ին տ. Սինոդի արած կարգադրութիւնն այդ խնդրի վերաբերմամբ, շատ ուրախացանք։ Տ. Սինոդը հետևելն է կարգադրել, ինչպէս կարդում ենք „Արարատում“ ... «Թէ քաղաքներում եւ թէ գիւղերում քահանայացուները ընտրելին եւ կարգելին թեմական Հոգեւոր դպրոցներում եւ Մայր-Աթոռի ճեմարանում աւարտողներից, իսկ այն անձինք, որոնք ինքնակոչ թեմով ձեռք բերած կը լինին քահանայագործական հմտութիւն, այդպիսիներին եւս՝ որոշելու է զգուշաւոր քննութեամբ, որը պարտաւոր են անել վիճակների Առաջնորդները եւ Կօնսիստորիաների անդամները։ Նրանց այդ թեմի քահանաները միայն քննելու են Սինոդում»։ Մենք, ի հարկէ, ինչպէս ասացինք, ուրախ ենք այդպիսի կարգադրութեան համար, բայց ներւի մեզ յայտնել այդ կէտի վերաբերմամբ մեր տարակուսանքը։ Արդեօք այդ միջոցները բաւական կարելի է համարել։ Մենք կարծում ենք որ այդ կարգադրութիւնը միայն իր վճռական ազդեցութիւնն և նշանակութիւնը կունենայ նրանից յետոյ, երբ որ այդ թեմի հաւատարիմ, քանի որ այդ բանաւոր թեմի քահանայացուները կըքննեն ս. Սինոդում, բայց միւս թեմերի վերաբերմամբ այդպիսի կարգադրութիւնը հազիւ թէ իր ազդեցիկ նշանակութիւնն ունենայ։

Ո՞վ պէտք է կոնսիստօրիայի անդամներից քննութիւն անի, այն անկիրթ, անշնորհ քահանան, որ վերջերս կարող լսարգահ միջոցներով քահանայ է դառել և որը չըգիտէ ոչ առաքեալները և մինչև անգամ իր մայրենի լեզուն, իսկ եթէ այդ խնդրառուն հայրն էլ քահանայ է և անգամ Կոնսիստօրիայում, այդպիսի դէպքում ինչ պէտք է անել և վերջապէս, ինչ չափով, ինչ ձևագրով պէտք է քննութեան ենթարկուին խնդրակիրները,—այդ բոլոր հարցերի պատասխանը մենք որոշ չենք տեսնում „Արարատի“ մէջ։ Թէև ս. Սինոդի կարգադրութեան ոգուց երևում է, որ պէտք է քննուին գէթ 4—5-րդ դասարանների չափով,—բայց և այնպէս այդ կէտը կարող է պատճառ չըլինել մեր յամառանների համար։ Մեր կարծիքով հարկաւոր էր կարգերը նշանակել թէ քաղաքի և թէ գիւղի քահանաների համար։ Քաղաքում լինէը՝ թեմական դպրոցից աւարտողը, իսկ գիւղում, եթէ չըկայ այդպիսինն՝ պահանջել քննութիւն 4—5-րդ դասարանի չափով։ Բացի սրանից գուցէ կըգտնուին մարդիկ քաղաքում, որոնք կարող են նոյն իսկ թեմ. դպրոցի քննութիւն տալ, ինչու այդպիսիների համար չըկազմել ծրագիր։ Կրկնում ենք, ծրագիր կապ մեզնից անհրաժեշտ է, որովհետև շատ դասատական դպրոցն աւարտածներն ընդունելու են, մինչդեռ այդպիսի դպրոցների մէջ չեն աւանդւում հայոց և եկեղեցական պատմութիւն, լեզուն էլ անցնում են թոյլ կերպով։ Բացի սրանից լինէը քննութեանը չըմասնակցի հայ թեմական կամ ուրիշ դպրոցի ուսուցիչը, քանի ոչ սրանք անհամեմատ բարձր են մեր անկիրթ քահանաներից։ Գալով ընտրութեան ձևին, մենք չենք կարող լուել նրա կատարեալ անյարմարութեան մասին, քանի որ մինչև օրս նա ոչ մի չոշափելի օգուտ չի տալիս Աղոթք լաւ չի լինիլ, որ քահանայացուներին էլ ընտրենք այնպէս, ինչպէս ընտրում ենք երեսփոխան կամ հոգաբարձու այսինքն ժխտականների ժողովով։ Համոզուած ենք, որ այդպիսի ընտրութեան ձևով մենք միանգամից կըհեռացնենք ենթակաղներին և գլխաւորն է-

ա կլինի ամբողջ հասարակութեան ընթացքը, այլ ոչ թէ մի քանի պրօ-տեժիների կամեցածը։ Հրաւիրում ենք այդ խնդրի վրայ մեր հոգեւոր բարձր կառավարութեան ուշադրութիւնը։

Ս.

—

Խմբագրութիւնից

Օրերս կուզարկենք երկու արկղիկ դեղօրայք և վարակչինջ պարագաներ Սալմաստի գաւառը՝ պ. Խ. Արզումանեանի դրատոր խնդիրքի համաձայն։

—

Նիւթատութին

Գիւղական հարժական դեղատների Համար ստացանք պ. Խ. Արզումանեանից 10 *ր., պ. Լևոնից* 5 *ր., պ. Ստանիսլաւ Զարախչիանովից* 5 *ր., պ. Բրեգերից* 5 *ր., պ. Պիրալեանից* 5 *ր. նախկին* 135 *ր. Հետ—գումարն* 165 *րուբլի։*

—

«Տարազի» № 28-ում տպուած *գիւղական հարժական դեղատների Համար* 5 *ր. նկատել է պ. Թ. Գ. Թովմասեանը, այլ* 3. Թովմասեանը։

—

Ժամանակագրութիւն

—

Մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ Բագուում սկսել է գաղափել խոլերը և զոհերի թիւը պակասում է։ Հրեղէն քաղաքի պատն անցեալ շաբաթ մի վտանգաւոր Ճաշկերոյթ է ունեցել, որն մասնակցել են այդ քաղաքի բժիշկները, սանիտարական յանձնաժողովի (?!) անդամները։ Խօսացել են այդ Ճաշկերոյթում շատ Ճառեր, բժիշկները մատուցել են լրատոյ խմբովին հանճարեղ լուսանկարը քաղաքապետին, որը, երևի, լրատոյն էլ յանձնած կլինի նըրանց։ Գովել են մխիթարեան հանճարեղութիւնը, եռանդը, մարդասիրութիւնը... համաձայնակի առաջն առնելու և քաղաքն օրինակելի կեղտով նրա դէմ պաշտպանելու համար։ Թող կատակ չհամարէ ընթերցողը, այդ բոլորը փաստեր են և մենք էլ արձագրում ենք։

Ձմռանը, մարդ չզգիտէ, ծիծաղն, ծաղրն, թէ արհամարհն, կամ ցաւի այդ թշուառ քաղաքն արդի վիճակի վրայ։

—

Բագուում պետական և զեմսկո-կամակի բանկերի ճիւղերը թոյլատրութիւն են խնդրում, որ եթէ նոր, մի այլ համանման տեսակ պատահելու լինի, Բագուից այդ հաստատութիւններն ուժամանակ տեղափոխեն Թիֆլիս կամ մի այլ ապահով քաղաք։

—

Մենք ևս Թիֆլիսի և Բագուի լրագրների հետ հաղորդել էինք, որ Բագուի փոխադարձ վարկի ընկերութեան մէջ ծառայողները՝ բացի Բանկի կառավարչից և պանձապահի օգնականից՝ թողել փախել են Բագուից։ Այժմ այդ ընկերութեան ուսուց դիրեկտօր և ժամանակաւոր կառավարիչ պ. Գրիգոր Այազեանը հերքում է այդ լուրը, որ և տպագրում ենք ջարազի ներկայ №-ում ու ինքն էլ՝ պ. Դ. Այազեանն երկու այտեղով անցնելով Շուշուց-Բագուից դէպի Աբասթումանի՝ իր բնակը և նոյն Բանկի կառավարիչ պ. Ադամեանի մօտ, բերանացի ևս մանրամասն յայտնեց մեզ, որ իրանց կառավարում Բանկի ծառայողները չեն փախել, այլ ընդհակառակ, համաճարակի ժամանակ նրանք ատենում են եղել գրամական նպաստ, խոհակ և այլն։ Աւելորդ չենք համարում յայտնել ևս, թէ իւրաքանչիւրն չըլինելու համար, որ այժմ Բագուի փոխադարձ վարկի ընկերութեան վարչութեան կառավարչի և ուսուց դիրեկտօրի բացակայութեամբ՝ Բանկը կառավարում է կրտսեր դիրեկտօր պ. Վարչամեանը և պ. Այազեանն օրերս կրկին պիտի վերադառնայ Բագու, իսկ բացակայ եղող միւս ծառայողները Բանկի վարչութիւնից օրինաւոր արձակուրդ ստանալով են հեռացել քաղաքից, ինչպէս ամեն ժամանակ և ամեն հաստատութեանց մէջ կատարւում է։

—

Բարեգործական Ընկերութեան անդամներից ոմանք հոգի դիմիլ էին նրա Խորհրդին, որ կրկին Ընդհանուր Ժողով կազմէ և մի 5,000 ր. կրկին ընծայաբերէ խոլերային վնասուածներին։ Այժմ մեզ հաղորդում են, որ Խորհրդի նիստը չըկայացաւ անդամների բացակայութեան պատճառաւ, որոնք, երևի անհրատակ հոմարելով այդ առաջարկը և անիրագործելի, աւելորդ համարեցին կրկին անգամ քաղաք գալու և նիստ կայացնելու։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ ցանկալի կըլինէր եթէ Թիֆլիսի 6-րդ քաղաքամասում նոր բացած Ձրի Թէյատունում մատակարկին մեր երկանեալ ինամելիգենտ պատակարգից անձինք՝ յաճախող հասարակութեան իրանց ծառայութիւնը մատուցանելով և Թէյ բաժանելով։

—

Պ. Ռամիկանտակի ժողոված տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսում արդէն բացած 13 Թէյատներում օրական խմբում է սամիկանտակի բացած Թէյատներում՝ 12,200 բաժակ Թէյ՝ հացով և 26,350 բաժակ եփ ուսած-սառցրած ջուր՝ պինով։

Ձանազան հաստատութիւնների և մասնաւոր անձանց նախաձեռնութեամբ և նպաստով բացած Թէյատներում օրական 14,750 բաժակ Թէյ՝ և 6,250 բաժակ ջուր-պինով։

1. Պուշկ. այգում	Թէյատ.	1,800	բաժ.	Թ. 10,000	ր. ջր-պին
2. Ալեքս. այգում	Բար. Ն.				
անու. բաց.	3,500	„	„	13,700	„ „ „
3. Հաւաքատի Կախ. Նր.	4 500	„	„	2,000	„ „ „
4. Թուրքաց մէյտանում		1,200	„	200	„ „ „
5. Վկր. Թէյ.	600	„	„	300	„ „ „
6. Բէկթր. Թ.	600	„	„	150	„ „
7. Սաղի Թ.	5,600	„	„	3,400	„ „
8. Միք. փ. գերման.	1,000	„	„	(եւ սրճ.) 250	„ „
9. Աւշ. փ. Մալականտ.	4000	„	„	750	„ „
10. Մատաթեան կղզ. վր. 8. Ասատուրովի եւ Մուսկի	2,200	„	„	1,000	„ „
11. Լկզ. Նր. վր. Դով. Ուղափ. տաբած-Լկնկթ.	1,400	„	„	600	„ „
12. Կուկիա, Ալեք. կկ. Թ.	300	„	„	(եւ սրճ.) 50	„ „
13. Դօլմանոփի բաց. Թէյ.	200	„	„	200	„ „

Ուրեմն ընդամէնն օրական, մինչեւ թուով, 26,950 բաժակ Թէյ, որուչ եւ 32,6000 բաժակ զինով-ջուր։ Բացի այս ամսոյս 5-ին Թէյավաճառ Ղօզաու Ընկ. բացել է մի Թէյատուն Երևանթուղու կայարանում եւ պ. Սուքիասեան Վօրոնցովեան փողոցում։

Քաղաքն ունի առայժմ եւ երկու ծրի օձարան. մէկը Ալեքսանդրեան այգումէ եւ

միւսը Հալաթարում. վերջինումն ծաշել չը կամենցողները կարող են իրանց բաժին կնքահորը տուն տանել:

Բացի այս՝ քաղաքիս Տամարևա բոլոր հաստատութիւնները, հիմնարկութիւնները, գործարանները, դատաստանատները եւ այլն բոլորեքեանքն էլ թէյ են տալիս իրանց ծառայողներին-եւ բանւորներին:

—

Ուսումնարաններում արձակուրդները, ինչպէս երևում է պաշտօնական տեղեկութիւններից, կըտևեն մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ ուսաց հոգևոր ուսումնարաններում մինչև հոկտեմբերի մէկը:

—

Պետերբուրգի Կայսերական Բժշկական Ակադեմիայի 4-րդ և 5-րդ կուրսերի ուսանողներին ուղարկել են Ռուսաստանի և Կովկասի զանազան քաղաքները և գիւղերը համաճարակի դէմ մաքառելու: Դասախօսութիւնները այդ Ակադեմիայի բարձր կուրսերում պիտի սկսուին հոկտեմբեր ամսին:

—

Երևանեան նահանգում և նոյն իսկ քաղաքում խոլերան մեծ զոհեր է առնում: Թիֆլիսի չըջակայքը նոյնպէս ասստիկ վարակուած են, ամբարանոց գնացողները սկսում են քաղաքս վերադառնալ: Թէև վերջին օրերս մեզ մօ անձրև էր գալիս, սակայն դեռ չոր է և տօթ:

—

Խոլերը տարածուել է համարեա ամբողջ Ռուսաստան. պաշտօնապէս յայտարարուած է, որ Մոսկուայում և Պետերբուրգում նոյնպէս խոլեր կայ և հիւանդները չատ: Պարիզում, Միլանում, Վիէննայում և Եւրոպայի մի քանի այլ տեղեր նոյնպէս տարածել է խոլերն իր ճիրանները:

—

Նիժնի-Նովգորոդի եռանդուն նահանգապետ պ. Բարանովը հեռագրով յայտարարում է, որ այդ քաղաքում և տօնավաճառում դադարում է խոլերը և տօնավաճառ գնացողները կարող են համարձակ ուղի ընկնել: Ահա թէ ինչ կարող են անել եռանդը, անձնուիրութիւնն ու կամքը: Բազուեցի փախստականների ու նրանց ղեկավարների ուշադրութիւնն ենք դարձնում Բարանովի և մեր ոստիկանապետ պ. Մատիցկու պէս գործիչների վրայ...

—

Թէև Մամբրէ սրբազանը բերանացի Կոնսիստորիայի անդամներին և իր ատորագրեալ քահանաներին խնդրել էր, որ եթէ հնարաւոր է, իրան Կոջորում թաղեն, և թէև սրբազան Տէղակալը յարդել էր հանգուցեալի վերջին կամքը, սակայն ինչ-ինչ պատճառներով պատշաճ համարուեց սրբազանի մարմինը բերել Թիֆլիս:

—

Կոնսիստորի նախանդամ և ս. Սարգիս եկեղ. վանահայր տէր-Համազասպ վարդ. ժամանակաւորապէս կառավարիչ նշանակուեց Թիֆլիսի թեմին:

—

„Մշակը" հաղորդում է, որ այս օրերս առաջին անգամ մի հայ կին հարցաքննութիւն է տուել եւրոպական համալսարանում և դօկտօրի ուսումնական աստիճան է ստացել: Դա տըրապիզոնցի, թիֆլիսաբնակ օրիորդ Վարդուհի Յակոբեանն է, որը մի քանի տարի է արդէն սովորում էր սրտաբանութեան: ԵՒւարտելով իր ուսումը Թիֆլիսի իգական հայոց դըպրոցներից մինում, օրիորդ Յակոբեան ուղևորուեց արտասահման, Շվէյցարիա, որտեղ կարճ ժամանակից յետոյ, վերջնական հարցաքննութիւն տուեց Ցիւրիխի իգական գիմնազիայում: Ապա օրիորդ Վարդուհի Յակոբեան ուսանողուհի ընդունուեց Ցիւրիխի համալսարանում և փոփոխապէս դասախօսութիւնները էր լսում թէ այդ համալսարանում, թէ Փընեվի և թէ Գերմանիայի Լայպցիգ քաղաքի համալսարաններում: Նա գլխաւորապէս ուսումնասիրում է մանկավարժութիւն, գրակ անութիւն, պատմութիւն, հոգեբանութիւն, և այլն: Այժմ օրիորդ Յակոբեան աջող կերպով ևւարտելով իր ուսումը, ներկայացրեց Շվէյցարիայի Բէրն քաղաքի համալսարանի փիլիսոփայական բաժնին մի ուսումնական գրաւոր աշխատութիւն և այդ համալսարանում հարցաքննութիւն տալուց յետոյ՝ արժանացաւ փիլիսոփայութեան դօկտօրի ուսումնական աստիճանին: Օրիորդ Յակոբեան, բացի բնածին արտակարգ տաղանդից, յայտնի էր ուսանողական չըջանում և իր զարմանալի տոկունութեամբ և աշխատասիրութեամբ: Օրիորդը հիմնաւորապէս գիտէ գերմաներէն և ֆրանսերէն լեզուները, հիմնաւորապէս գիտէ և հայերէնը. իր ազատ ժամանակները նա երբեմն աշխատակցում էր „Մշակին" առանց իր ազգանունը ատորագրելու: Օրիորդ Յակոբեան ոչ թէ միայն առաջին հայ կինն է, որն իր ուսումը արտասահմանեան համալսարանում է աւարտել, բայց և վերատհոսութեամբ կարող ենք ասել՝ առաջին հայ մանկավարժ է եւրոպական բարձրագոյն, համալսարանական ուսումով:

—

Հերքումն

6 յուլիսի, Թիֆլիս.

Ի ձեր „Տարագ" շաբաթաթերթի № 25-ում, ի Բագրի „Кастій" եւ ի Թիֆլիսում հրատարակուող մի քանի ուրիշ լրագիրներ հաղորդել էին, որ Բագրի Փոխադարձ Վարկի Ընկերութեան մէջ ծառայողները բոլորը փախել են, բայց կառավարչից և գանձապահի օգնականից, սրատրք եմ համարում յայտնել հրատարակաւ, որ այդ լուրն ուղիղ չէ եւ ոչ ոք Փոխադարձ Վարկի Ընկերութ. մէջ ծառայողներից դեռևս չէ:

Փոխ-կառավարիչ Ընկերութ.

Գրիգոր Այազեան

—

Թղթակցութիւն

Կօջօր, 3 օգոստոսի.

Ընդհանրապէս ամէն մարդ գիտէ, որ Կօջօրը մի շատ փոքր ատան է, այնու ամենայնիւ մեզ անհնար եղաւ ճիշտ տեղեկանալ, թէ արդեօք սրբազան Մամբրէ եպիսկոպոսը շաբաթ օրը ժամը քանիսին աւանդից հոգին: Ոմանք հաւատացնում են, թէ ժամը 3 ին, ոմանք ժամը 8-ին, իսկ մի քանիսները թէ կէս գիշերին:

Վերջին օրերը թեմական առաջնորդ հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսը բոլորովին անհնազանդութեան մէջ էր՝ սրբազանի բարեկամները, կուսակիցները գազարել էին նրան այցելելուց:

ՕՐ. ՍԻՒՐԱ

—

Շուշի, 4 օգոստոսի.

Եղանակն այստեղ բաւական մեղմացել է, հիւանդութիւն, մանաւանդ հայոց թաղերում, բաւորովին չըկայ: Սաստիկ թանգութիւն է: Բազուեցիները կամաց-կամաց սկսում են վերադառնալ իրանց երկրորդ հայրենիքը. առանց սր եւ է նիւթապութիւն անելու մեր քաղաքի, գաւառի հասարակաց հիմնարկութիւններին եւ հասատատութիւններին:

Ր.

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան

ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆ. Дозв. Ценз. Тифлисъ. 8-го августа 1892 г. Тип. Ароръ. Т. Я. Назарьянъ, Барят. ул.